Գուցէ մեր դատողութիւններն այնքան հիմնաւոր և փաստերն այնքան զօրաւոր չեն, որ բաւական համարուին վերջնականապէս լուծելու պրոֆէսսոր Ա. Կարրիէրի զարթեցրած բանասիրական կարեւոր խնդիրը. բայց կարծում ենք, որ նոքա արժանի են հմուտ բանասէրների ուշադրութեան և քննութեան, որոնք եթէ այս տեսակէտից խնդիրը քննելու լինեն՝ յոյս ունինք աւելի զօրաւոր փաստեր կը կարողանան գտնել, քան որ մեզ յաջողեցաւ այս ամփոփ գրած յօդուածում.

Յամենայն դէպս անկեղծ շնորհակալութիւն ենք յայտնում գիտնական Ա. Կարրիէրին, որ առաջինն արծարծեց այս կարեւոր բանասիրական խնդիրը, որի այս կամ այն կերպ լուծումը խիստ հետաքրքրական պէտք է լինի մեր գրականութեան և յատկապէս ծերունի քերթողահօր պատմութեան և անձնաւորութեան նկատմամբ.

13 դեկտեմբերի, 1892 թ.
Թիֆլիս.

Նոր ստացուած գրքեր

---

1) ԱՐՇԱՐՈՒՆԻ.—«Սիրոյ ճարակք»։ Տիրան և Արփենիկ։ Կաղզւանի անցեալից առնուած մի պատկեր։ Ալեքսանդրապոլ, տպ. Գ. Սանոյեանցի, գինն է 40 կոպէկ։

2) ՆԱԶԱՐԵԱՆՑ, Ց., սարկաւագ.—«Յիսուս Քրիստոսի մկրտութիւնը (ժողովրդական ընթերցանութեան համար), Թիֆլիս, տպարան Շարաձէի, 1892 թ., գինն է 8 կոպէկ։

3) ՆՈՑՆԸ.—«Օրացոյց 1893 Թւականին Քրիստոսի» (վեցերորդ տարի)։ Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 20 կոպէկ։

4) ՔԻՒՐՔՉԵԱՆ, Վ. Մ.—«Համառօտ պատմութիւն ընդհանուր ազգաց (!)։ Մասն Ա. Արեւելեան հին պատմութիւնք» (Վաւերացեալ ուսումնական Խորհրդոյ Ազգ. Կենդ. Վարչութեան)։ Կ. Պոլիս, տպարան Ն. Ճ. Արամեան, 1892 թ., գինը 4 ղրուշ։

5) ՉՄՇԿԵԱՆ, Մ.—«Ժողովրդական պատկերազարդ օրացոյց 1893 թ. համար»։ Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 25 կոպէկ։

6) Հրատար. ԱՍՔ-ԱՒԷԻ.—«Զրոյցներ» (Փոխադրութիւն) Տետր Ա. 1) Անասուններն էլ մեզ են, 2) Կոյր երաժիշտը, 3) Երազ, 4) Ճշմարտախօս աշակերտը, 5) Եղբայրասէրը։ Թիֆլիս, տպարան Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 5 կոպէկ։

7) ԲՐԻԼԵԱՆՑԻԿԵԱՆ.—«Հայկական մենագրամներ և ծաղկագրեր ձեռագործի համար»։ Հրատարակութիւն Ք. Բաչինջաղեանի։ Ս. Պետերբուրգ, 1892 թ., գինն է 50 կոպէկ։